ՎԱՂԱՏՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ

2022 - 2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ-----

2021 - 2022 ուսումնական տարին Վաղատուրի միջնակարգ դպրոցը փակեց բավարար ցուցանիշներով,սակայն ոչ նորմալ պայմաններում,քանի որ հանրապետությունում բռնկվել էր համաճարակ ,որը խիստ բացասական ազդեցություն է ունեցել ուսումնական պրոցեսի վրա : Իր բացասական կողմով հանդերձ ուսումնական տարին փակել ենք : 9- րդ դասարանն ավարտած 2 աշակերտներից 2-ը ուսումը շարունակում են 10-րդ դասարանում , 12-րդ դասարանն ավարտել են 3 աշակերտ : Այս ուսումնական տարում դպրոց են ընդունվել 6.- ից 15 տարեկան բոլոր դպրոցահասակ երեխաները: Դպրոցը սկսել ենք կապիտալ վերանորոգված շենքային պայմաններում ,որը պարտավորեցնում է մեզ որ այս ուսումնական տարում էլ ավելի լավ պիտի աշխատենք :

2021 - 2022 ուս.տարում առաջադիմությունը կազմել է 100 տոկոս: Գնահատված 43 աշակերտներից տարեվերջին ունեինք 6 գերազանցիկ և 8 հարվածային `

Որոշակի առաջընթաց է նկատվել առարկայական մասնախմբերի աշխատանքներում, արտադասարանական-արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, մրցույթների և ցերեկույթների բազմազանությունը , ուսուցման նոր մեթոդների կիրառումը նույնպես գովելի է: Սակայն նույնը չենք կարող ասել ,աշխատանքային ընդհանուր կարգապահության, աշխատանքը ծնողների, համայնքի անդամների, ետ մնացող աշակերտների հետ , ծրագրերի կատարման մասին, որը, կարծում ենք , այսօրվա հրամայական պահանջն է:

Այս ամենը հաշվի առնելով՝ դպրոցը իր առջև 2022 - 2023 ուս.տարում դնում է այնպիսի խնդիրներ, որոնք պետք է ապահովեն նկատելի առաջընթաց թե ուսուցման, թե դաստիարակության կազմակերպման: Դրան հասնելու համար անհրաժեշտ ենք համարում հետևյալ աշխատանքների առաջնահերթությունը.

ա / Ուսումնական գործընթացը կազմակերպել ըստ կրթական չափորոշիչների՝ ապահովելով կրթակարգի նորմերի իրականացումը.

բ / Արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների նպատակային կազմակերպում.

գ / Մանկավարժների հետ կատարվող աշխատանքի ռացիոնալ կազմակերպում.

դ / Աշխատանք ծնողների, համայնքի անդամների և այլ կազմակերպությունների հետ. Տանել բացատրական աշխատանքներ - պատերազմական իրավիճակում ինչպես պահպանել անվտագության կանոնները, դպրոց գալ պատրաստված դասերով պահպանել դպրոցական գույքն ու շենքը

ե / Ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ նպատակային վերահսկողության իրականացում.

զ / Դպրոցի ֆինանսա- տնտեսական գործունեության կազմակերպում.

է / Արձակուրդների օրերին դպրոցի աշխատանքների կազմակերպում:

Հատկապես կարևոր է համարվում 6 տարեկանների / առաջին դասարան/ ընդունման, դասապրոցեսի, առողջության և հանգստի ու սննդի կազմակերպման գործընթացը, ուստի պլանավորվում է կատարել հետևյալ աշխատանքները.

ա / այս ուսումնական տարում դպրոց կհաճախի 1 առաջին դասարանցի.

բ / Ժամանակին համապատասխան սեղան-նստարաններով կահավորել դասարանները, և այլ պարագաներ բերել դասագրքեր, գունազարդ տետրեր, պաստառներ
և այլ անհրաժեշտ դիդակտիկ պարագաներ.

գ / կազմակերպված ձևով շարունակել տարրական դասարանների երեխաների սննդապահովման ծրագիրը :

դ / Առանձնացնել ֆիզկուլտ գույքով համալրված դասասենյակ՝ նրանց առողջության և ֆիզիկական դաստիարակության գործընթացը կազմակերպելու համար, ստեղծել շախմատի դասարան՝ կահավորված անհրաժեշտ գույքով:

Առաջին բաժնում նախատեսված և մյուս աշխատանքների օրգանական կապն ու շարունակականությունն ապահովելուն հասնելու համար հաջորդ բաժիններում ավելի մանրամասն կներկայացվի դրանց կատարմանն ուղղված կոնկրետ միջոցառումների պլանը:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2021-2022 ուսումնական տարում դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և կառավարման գործում հասել ենք որոշակի հաջողությունների, որը արդյունք է ուսուցիչների տնօրինության համագործակցված աշխատանքի: Սակայն դրանք ավելի ակնառու կլինեին, եթե կատարված աշխատանքի նկատմամբ պատասխանատվության զգացումը էլ ավելի բարձր լիներ: Մասնավորապես՝ կազմակերպված միջոցառումները, դասալսումները, մասնախմբերի նիստերը, արտադասարանական աշխատանքները ավելի շատ նման էին ինչ-որ բան անպայման կատարած լինելու համար, այլ ոչ թե դրանք հիմնական նպատակին ծառայեցնելու, այն է՝ հասնելու ուսուցման և դաստիարակության որակի բարձրացման, գիտելիքների հիմնավոր տրման և ընկալունակության մեծացման, միջոցառումից մի նոր բան տանելու, դասապրոցեսի կազմակերպման նոր, օպտիմալ ձևեր օգտագործելու և այլն: Դրանում իրենց մեղքի չափաբաժիններն ունեն և տնօրինությունը և ուսուցիչները:

Վերոնշված թերությունների վերացման և նոր հաջողությունների հասնելու համար դպրոցը 2022 - 2023 ուս.տարում իր առջև դնում է այնպիսի խնդիրներ, որոնց իրագործումը պետք է լինի գործունեության հիմնական նպատակը,իհարկե համաճարակի և պատերզմի ավարտից հետո ,իսկ մենք հուսով ենք ,որ այն շուտ կավարտվի

Առաջնահերթ խնդիր է դառնում ուսուցման և դաստիարակության նոր մեթոդների կիրառման,

նորագույն տեխնոլոգիաների ներդրման, ուսուցիչներին այսօրվա պահանջներին համապատասխան պատրաստվածության հասցնելու միջոցով աշխատանքների կազմակերպումը: Դրան հասնելու համար մեծ ջանք ու եռանդ կպահանջվի կոլեկտիվի բոլոր անդամներից, որովհետև չպետք է մոռանալ, որ շատերն են աշխատում հնից մնացած իներցիայով: Նոր ուսումնական տարում դպրոցի գործունեության գլխավոր խնդիրը լինելու է ուսուցման և դաստիարակության համապատասխանեցումը / կամ վատագույն դեպքում մոտեցումը / կրթության ազգային ծրագրին և հայեցակարգին՝ գործածության մեջ դրված հանրակրթության պետական կրթակարգի իրագործումը:
Այդ պատճառով նախատեսվում է աշխատանքի կազմակերպման հետևյալ կանոնակարգը, որը, կարծում ենք, կտա որոշակի արդյունք:

1.Ուսուցիչների ինքնակրթության ակտիվացման, մեթոդամանկավարժական նոր մտածելակերպի, մասնագիտական որակի բարձրացման միջոցով երեխաներին հասանելի և ընկալելի դարձնել դպրոցական դասընթացն ամբողջությամբ՝ ապահովելով անձի առողջության պահպանումը, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացումը, բարոյական և գեղագիտական որակների ձեռքբերումը: Այս կետի պահանջներին հասնելու համար գիտահետազոտական ընդհանուր թեմա է նախանշվում '' ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ '' վերնագրով ուսումնասիրությունների շարքը, քանի որ այսօ արդեն ունենք 14 նոր վերապատրաստված ուսուցիչներ՝ տարբեր առարկաներից / ենթաթեմաներով կշարադրվի հաջորդ բաժիններում /:Այս ուսումնական տարում նախատեսվում ևս 3 ուսուցչի վերապատրաստում:

2.Սովորողների գիտելիքների որակի բարձրացում:

Այս ենթակետի իրագործումը ևս մեծ աշխատանք է պահանջում,որովհետև դպրոցի գործունեության հայելին այնտեղ ավարտած կամ սովորող աշակերտի ստացած գիտելիքն ու դաստիարակվածությունն է՝ գումարած ունեցածը կյանքում գործածելու կարողությունը, որին, ցավոք, շատ քիչ կամ համարյա ուշադրություն չենք դարձնում, որից տուժում է երեխան, ընկնում է ուսուցչի վարկը:

Այս կետի իրագործման համար նախատեսվում է՝

ա / ՏԱՐՐԱԿԱՆ դպրոցում կրթության նպատակ դարձնել՝

1. Լեզվամտածողության, գրագիտության և տրամաբանության կարողունակության հիմքերի ձևավորումը :
2. Պատմական, մաթեմատիկական, բնագիտական, արվեստի բնագավառների որոշ տարրերի տարրական գիտելիքների և պատկերացումների յուրացումն ու ձևավորումը:
3. Ճանաչողական, ստեղծագործական, ինքնագնահատման,ուսումնական, աշխատանքային, խաղային և նման գործունեությունների ընթացքում տարրական կարողունակությունների և հմտությունների ձևավորումը:
4. Անվտանգության կանոնների տարրական տիրապետում, ընտանիքի, հայրենիքի, ընկերների, մեծերի և շրջակա միջավայրի նկատմամբ անձնական համապատասխան վերաբերմունքի ձևավորում:
5. Միջին դպրոցում սովորելու համար անհրաժեշտ պատրաստվածության ապահովում:

Տարրական դպրոցի գլխավոր խնդիրը սովորել սովորելու ունակության ձևավորումն է:

բ / ՄԻՋԻՆ դպրոցում կրթության նպատակ դարձնել՝

1. Մարդու, բնության, հասարակության վերաբերյալ գիտելիքների համակարգի հիմքերի յուրացման ապահովում:

2. Հայոց լեզվի, գրականության, հայոց պատմության / այդ թվում՝ հայկական մշակույթի և Հայոց եկեղեցու / հիմնական կանոնների, օրինաչա փությունների իմացության և գրավոր ու բանավոր գրագետ հաղորդակցվելու հմտությունների յուրացման ապահովում:
3. Մաթեմատիկական գիտելիքների համակարգի հիմքերի յուրացում, առնվազն երկու օտար լեզվով հաղորդակցման տարրական մակարդակի ապահովում:
4. Համաշխարհային արդի հիմնախնդիրների իմացության խորացում, ստեղծագործական և հետազոտական, առողջ ապրելակերպի, ֆիզիկա-կան և հոգեկան ներդաշնակ զարգացման ունակությունների և հմտությունների զարգացման ապահովում:
5. Ազգային պատկանելության լիարժեք գիտակցման, իր և մյուսների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, իր՝ որպես հասարակության անդամի պարտականությունների և իրավունքների գիտակցման, համամարդկային արժեքների նկատմամբ հարգանքի դրսևորման ձևավորման ուսուցման ապահովում:

Միջին դպրոցի հիմնական խնդիրը սովորողների ուսումնահետազոտական և որոշակի աշխատանքային գործունեություն իրականացնելու կարողություններ ձևավորելն է :

գ / ԱՎԱԳ դպրոցում կրթության նպատակ դարձնել՝

1. Ազգային և համամարդկային մշակութային արժեքների և քաղաքակրթությունների ընդհանրական իմացությունների ապահովում:
2. Մայրենի լեզվից բացի երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր անկաշկանդ հաղորդակցվելու կարողության ապահովում:
3. Սովորողների ստեղծագործական երևակայության զարգացման, ինքնուրույն որոշումների կայացման, ինքնագնահատման, ինքնակատարելագործման, ինքնատիրապետման հմտությունների ձևավորման ապահովում:
4. Սոցիալական հարաբերություններում ճիշտ կողմնորոշվելու, մարդկանց հետ շփվելու, փոխհարաբերություններ ստեղծելու, հասարակական խմբե րում ներգրավվելու, ժամանակակից տեխնիկական միջոցներով հաղորդակցման, քաղաքական մշակույթի պահանջների իմացության, հմտությունների և կարողությունների ապահովում:
5. Արժեքային վերաբերմունքի և դիրքորոշման ձևավորում, այդ թվում՝
   ա / Հետագա ուսման, մասնագիտության ընտրության հարցում գիտակցված մոտեցում:
   բ / Զինծառայության անհրաժեշտության կարևորում և ընդունում:
   գ / Ընտանեկան կյանքի կարևորության և ընտանիքի նկատմամբ նվիրվածության գիտակցում:
   դ / Սեփական հնարավորությունների և կարողությունների դրսևորման, իր իրավունքների իրացման և արարքների ու գործողությունների համար պատասխանատվություն և կամք ցուցաբերելու գիտակցում ու կարևորում:
6. Միասնական ավարտական քննություններին նախապատրաստում :

ԱՎԱԳ դպրոցում կրթությունը նպատակաուղղվելու է մասնագիտական կրթություն ստանալու կամ ինքնուրույն կյանքի ու գործունեության անցնելու

համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Վերոնշված կետերի ու ենթակետերի իրագործումը պետք է լինի յուրաքանչյուր աշխատողի գերնպատակը, որովհետև թեկուզ չնչին բացթողման դեպքում կփլվի ամբողջ ուսումնական բուրգը:

Դպրոցի 2022 - 2023 ուս.տարվա կարևորագույն խնդիրներից պետք է համարել երեխաների դաստիարակվածության մակարդակի բարձրացումը: Դրա համար անհրաժեշտ ենք համարում դասապրոցեսի և արտադասարանական միջոցառումների, դասղեկի, ԴԱԿ -ի և տնօրինության աշխատանքների կոորդինացումը և միանպատակությունը /դրանց մասին կշարադրվի համապատասխան բաժիններում / :

Աշխատանքների կատարման արդյունավետության գրավականներից է դասավանդման և դաստիարակչական միջոցառումների մակարդակը / վերջինիս մասին մանրամասն՝ համապատասխան բաժնում / :

Դասավանդման մակարդակի բարձրացումը տնօրինության և առարկայական մեթոդմիավորումների ամենօրյա աշխատանքի առաջին կետը պետք է դարձնել, որովհետև որոշակի որակ ապահովելու համար նախ անհրաժեշտ է նյութը որակյալ մատուցել, իսկ դրան հասնելու համար նախատեսում ենք կատարել հետևյալ աշխատանքները.

1. Անխնա պայքար տանել աշխատանքային կարգապահությունը անհիմն խախտողների դեմ, հասնել նրան, որ ուսուցիչը բացակայի միայն հիվանդության կամ օրենքով սահմանված դեպքում:

2. Հետևողական ստուգում աշխատանքի միջոցով նվազագույնի հասցնել ժամավաճառությամբ զբաղվել փորձողների թիվը / վերջնական նպատակ համարել երևույթի բացառումը /:
3. Կազմել կայուն դասացուցակ, որը պետք է համապատասխանի գիտականորեն ընդունված չափանիշներին:
4. Որպես դասավանդման առաջին պայման ընդունել օրվա դասերի պլանի առկայությունը / եթե դասի պլան չունի՝ չթույլատրել դասարան մտնելու՝ պահելով տվյալ դասաժամի վճարը /: ----------
5. Դասավանդման որակի վրա մեծ չափով ազդում է նաև մամուլը, լրատվամիջոցները, նոր կամ ասպարեզում գտնվող գրականությունը, դրանցով ապահովելու համար բյուջեում որոշակի գումար նախատեսել և այն օգտագործել նպատակային
6. Դասավանդման առաջավոր և արդյունավետ փորձը / մեր ուսուցիչների կամ այլոց / ոչ միայն փորձել տարածել, այլ ներդնել տարբեր ձևերով :

Վերոնշված կետերը և մյուս ենթակառույցների աշխատանքային պլանները պետք է գործեն ինչպես մի մեքենա, այլապես կունենանք այն, ինչ ունենք:

Աշխատանքները ճիշտ կազմակերպելու և որոշակի հաջողության հասնելու համար կարևորվում է նաև ուսուցիչների որակավորման, վերամասնագիտացման ու կամավոր ատեստացիայի սուր անհրաժեշտությունը, ինքնագնահատումը: 2016թ.- ին վերապատրաստման դասընթաց են անցել դպրոցի հայոց լեզվի, տարրական դասարանի և ռ-լեզվի 3 ուսուցիչներ ,իսկ 2017թ ֆիզիկայի ,հ-լեզվի , տեխնոլոգիայի և տարրական դասարանի ուուցիչները, թվով 4 հոգի,2018թ-ին ,տեխնոլոգիայի և պատմության ,թվով 2 հոգի 2019թ - ին նախատեսված է թվով 3 հոգի,սակայն դադարեցման պատճառով չի կատարվել: Այս ուսումնական տարում նախատոսվում է նաև այդ 3 հոգու վերապատրաստումը

2022 - 2023 ուս.տարվա դասարանների կոմպլեկտավորումը / 7.75 դասարան 36 աշակերտով , սակավ աշակերտներ ունեցող դպրոցներում առաջանում են բազմաթիվ խնդիրներ այսինքն՝ առաջանում է 2 - 3 ուսուցչի կրճատման անհրաժեշտություն, որին թեև մենք հակված չենք, բայց ստիպված ենք գնալ, որովհետև բյուջեն դա է ենթադրում:
Ունենալով սերտ համագործակցություն Գորիսի պետական համալսարանի , մենք ձգտելու ենք առաջին իսկ հնարավորության դեպքում մեր դպրոցի ուսուցիչներին ընդգրկել տալ վերապատրաստման գործընթացում, ընդգրկվելու հանրապետության տարբեր կազմակերպությունների կողմից անց կացվող միջոցառումներին, փորձարարական և այլ տիպի վերամասնագիտացման:
Շատ է կարևորվում դասավանդման և դաստիարակության մեթոդների կիրառման ձևերը : Ինչպես գիտենք, դրանք բազմազան են, ուստի մնում է միայն այն ճիշտ տեղում և ճիշտ ձևով կիրառել, որպեսզի չխաթարվի դեռահասի ուսուցման և դաստիարակության միասնականությունը, այլապես կունենանք լավ դաստիարակված, բայց անգրագետ / թե-քիչ հավանական ենք համարում/ կամ՝ հակառակ որակներով օժտված երեխաներ, որոնք հասարակության լիիրավ անդամներ չեն լինի, իսկ մենք կատարած չենք լինի մեր առջև դրված գլխավոր խնդիրը, այն է՝ հասարակության համար նախապատրաստել խելացի, գիտակից, արժեքային վերաբերմունք և դիրքորոշում ունեցող անձնավորություններ: Վերջնական եզրակացությունն այն է, որ ուսուցման և դաստիարակության օգտագործվելիք մեթոդները լինեն գիտականորեն ապացուցված, չվնասեն երեխայի առողջությունն ու ներքնաշխարհը, մանավանդ դաստիարակության հարցում՝ անպայման ցուցաբերել անհատական մոտեցում:

Դպրոցի գործունեության կարևոր նախապայմաններից է նաև դպրոց և ծնող փոխհարաբերությունը, առանց որի անհնար է որոշակի հաջողություն ակնկալել: Այս հարցը, անկեղծ ասած, նախորդ տարիներին չի գտնվել գոնե միջին մակարդակի վրա, որի պատճառով ունեցել ենք պրոբլեմներ, որը, սակայն, չի կապվել վերոնշված փոխհարաբերության բացակայության հետ, ինչը, կարծում ենք, եղել է մեծ վրիպում:
Նախորդ տարիների սխալները չկրկնելու համար այս ուստարում նախատեսում ենք ԴԱԿ-ի և դասղեկների աշխատանքներում կատարել հիմնավոր փոփոխություններ, որը կլինի արդյունավետ և ծնողների և դպրոցի համար / դրանք մանրամասն կշարադրվեն հաջորդ բաժիններում՝ կատարող -ժամկետ և պատասխանատու մեթոդով / :

Երկրորդ բաժնի առաջին ենթաբաժնի նշված աշխատանքների կատարման համար պատասխանատու են տնօրենը, փոխտնօրենները,մասնախմբերի նախագահները, դասղեկները:

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կառավարման կարեվոր բաղկացուցիչն է արտադարանական և արտադպրոցական դաստիարակ-չական աշխատանքները:
Նախորդ տարիներին կատարվել է բազմատեսակ և բազմաբնույթ միջոցառումներ,սակայն դրանք միշտ չէ, որ ունեցել են արդյունավետության բարձր տոկոս, քանի որ դրանց մի մասը եղել են միօրինակ, ժամանակավրեպ, իսկ մյուսի արդյունքները այնքան էլ շոշափելի չեն եղել, որպեսզի այն դառնա շարժիչ ուժի նախապայման: Մի որոշ մասն էլ ընդհանրապես չի գործել՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով / ջեռուցում, դահլիճ,կազմակերպչական

անկարողություն և այլն / , չի գործել աշակերտական ինքնակառավարման օղակները, դեպքից-դեպք է երևացել կազմակերպիչների աշխատանքը:
Այս ամենը հաշվի առնելով՝ այս ուսումնական տարում նախատեսում ենք կատարել այնպիսի աշխատանքներ, որոնք կլինեն համակարգված, նպատակային, կունենան ավելի մեծ ազդեցություն և կծառայեն մեր նախանշումներին:
Մասնավորապես՝ ձգտելու ենք հասնել այն բանին, որ կատարվող աշխատանքները ունենան կոնկրետ գաղափար, դաստիարակչական ազդեցություն, մասնակից լինեն ինչքան հնարավոր է շատ աշակերտներ և ուսուցիչներ, ունենան որոշակի ուղղվածություն և այլն:
Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի բոլոր աշխատանքային պլաններում արտացոլված լինեն ներքոհիշյալ գլխավոր ուղղությունները և թեմատիկան.

ա / Ընդհանուր դպրոցական միջոցառումները անց կացնել՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունները և դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցման սկզբունքը.
բ / Բարոյական դաստիարակություն.
գ / Հոգևոր դաստիարակություն.
դ / Աշխատանքային դաստիարակության.
ե / Հայրենասիրական, գեղագիտական – ֆիզիկական դաստիարակություն.
զ / Բնապահպանական դաստիարակություն – բնության նկատմամբ խնայողական վերաբերմունքի ձևավորում.
է / Առողջ ապրելակերպի դաստիարակություն / ՁԻԱՀ, ՄԻԱՎ , COVID և այլն /:

Հատկապես կարևորվում է բնապահպանական դաստիարակության դերը, որն իր մեջ կներառի բնաճանաչողական, հայրենագիտական և նման աշխատանքներ:

Շատ ենք կարևորում նաև աշակերտական ինքնակառավարման մարմինների դերը, ուստի նախատեսում ենք մինչև հոկտեմբերի կեսերը ստեղծել և ունենալ գործող աշակերտական ինքնակառավարման մարմին՝ դրա տեսակի ընտրությունը թողնելով աշակերտներին: Ամեն ինչ անելու ենք, որպեսզի կայանան արդար ընտրություններ և յուրաքանչյուրն անմիջապես անցնի իր լիազորությունների շրջանակներում տրված գործունեությանը, մասնակից դառնա դպրոցի կառավարման և այլ գործընթացների:

Այս ենթաբաժնի աշխատանքների կազմակերպմանը բացի կազմակերպիչներից շատ կարևոր է ուսուցիչների ակտիվ մասնակցությունը, ուստի անհրաժեշտ ենք համարում տրամադրվածության և նվիրվածության պայմանների ստեղծումը, որը, կարծում ենք, հաջողության գրավականը կլինի:

Այս ենթաբաժնի համար պատասխանատուներ են համարվում տնօրենը, փոխտնօրենը, կազմակերպիչը, խմբակավարները, դասղեկները, մասնախմբերը, ուսուցիչները / յուրաքանչյուրն իր բաժնով / :

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Դպրոցում իրականացվող յուրաքանչյուր աշխատանք, ինչքան էլ վստահես, այնուամենայնիվ, անհրաժեշտ է վերահսկել, քանի որ առաժմ ոչ բոլորն են իրենց պարտականությունների մեջ անթերի:
Վերահսկողությունը կառավարման կարևոր ֆունկցիաներից է և այն պետք է իրականացնել ըստ ''Կրթության մասին '' օրենքի դրույթների՝ դասավանդման , դաստիարակության , սովորողների գիտելիքների, դրանց որակի, ուսում նական ծրագրերի իրագործման նպատակով: Տնօրինությունը իր համար կարևորում է « Ախտորոշման վերահսկողության» մեթոդը: Վերոնշվածը իրականացնելու համար նախատեսում ենք կատարել հետևյալ աշխատանքները.

Վաղատուրի միջնակարգ դպրոցի 2022-23 ուս. տարվա տարեկան աշխատանքային պլան

Շաբաթներ	Վերահսկողության նպատակը – առարկան	Ստուգման ձ–ը	Դասարանը	Կատար-ման ժամկետը	Կատարման պատասխանատու / մասնակից /
1 ին - 2 -րդ շաբաթ	Դասարանների նախապատրաստվածությունը, դասագրքերի բաշխվածությունը , գիտելիքի օր	Դիտում, հարցում, մասնակցություն	1 - 12	14.09-30.09	Տնօրեն,փոխտնօրեն,դասղեկներ, խորհրդի անդամներ
3-4 շաբաթ	Աշակերտների հաճախումները, գրքերի շահագործումը, սանիտարական վիճակը	Այցելություն հարցումներ	1 - 12 աշակերտ. – շենքը	Ամեն շաբաթ	Տնօրեն, փոխտնօրեն, կազմակերպիչ, դասղեկներ, գրադարանավար
5 -6 շաբաթ	Օրվա պլանների – թեմատիկ պլանների – դասամատյանների ստուգում	Դասալսում ընդհանուր ստուգում	1 - 12 դասարան.	Ամեն օր, ամեն շաբաթ	Տնօրեն, փոխտը նօրեն, մ / մ նա-խագահ

7-8 շաբաթ	Հայոց լեզվի դրվածքը 5-րդ ,9 - րդ դասարաններում , խմբակների ընթացքը	Դասալսում, մասնակցություն	5 – 9 , 4 - 12	10-25. 10	Տնօրեն, փոխտնօրեն, մ / մ նախագահ
9-10 շաբաթ	Պատմության ,ֆիզիկայի ուսուցիչների դասավանդման մեթոդները, մեթոդ-միավորումների նիստերի գումա-ռումների թիվը – հարցերը,'' Ուսուցչի օր '' միջոցառում	Դասալսում, ինֆորմա-ցիա, մասնակցություն	7 - 12	1 - 15. 11	Տնօրեն, փոխտնօրեն,մ / մ նախագահ, ուսուցիչներ, խորուրդների անդամներ,հրավիրվածներ
11 -12 շաբաթ	Ուշացումների – բացակայություն-ների հաշվառում, օտար լեզուների դրվածքը, գրավորների քանակները – տեսակները	Հաշվառում, դասալսում,	3-12	15- 25. 11	Տնօրեն, փոխտնօրեն, կազմակերպիչ, մ / մ նախա-գահներ, զինղեկ

13 - 14 շաբաթ	Ստուգողական աշխատանքներ մաթեմատիկա, քիմիա առարկա-ներից,միջոցառում 1-4 դաս. աշակերտների մասնակցությամբ	Դասալսում, գրավոր աշ-խատանք, դիտում	7-12 դաս 1-4 դաս	25 -10 . 12	Տնօրեն, փոխտնօրեն, կազմակերպիչ, դասվարներ, մ / մ նախագահներ

15 - 16 շաբաթ	Դասագրքերի շահագործման վիճակը, գրականության դասավանդ-ման, աշխատան-քային տետրեր. բացակայող աշակերտների հաշվառում, պատճառների բացահայտում	Հաշվառում, դասալսում, դիտում, հարցում, Հաշվառում դասալսում, դիտում	1-12 դաս 5-9 դաս 1-12 դաս	10 -25 . 12	Տնօրեն, փոխտնօրեն, կազմակերպիչ, ֆիզղեկ, գրա-դարանավար

17-րդ շաբաթ	օլիմպիադաների կազմակերպում , կիսամյակի ամփոփում ; ;Վերահսկողության արդյունքների քննարկումներ, ինքնագնահատման ռուբրիկների կազմում	Զեկուցում, դիտում, հաշվառում	7-12 դաս	20- 25 . 12	Տնօրեն, փոխտնօրեն, կազմակերպիչ, մ / մ նա-խագահներ
18 -19 շաբաթ	Ծրագրերի կատարման ընթացքը, գրա վորների քանակը, մատյանների վիճակը,	Ստուգում, հաշվառում,	1-12 դաս	15- 25 . 01	Տնօրեն, փոխտնօրեն, մ/մ նախագահներ
20 - 21 շաբաթ	միջոցառումների հաստատում, մանկխորհի անցկացում	Զեկուցում, ելույթ, դիտում,	1-12 դաս ուսուցիչներ	25-5 .02	Տնօրեն, փոխտնօրեն, դասղեկներ, մ/մ նախագահներ, կազմա-կերպիչ

22 -23 շաբաթ	Կենսաբանության ուսուցման դրվածքը, առաջին դասարանցիների փոքր հանդես Դասավանդման նոր մեթոդներ	Դասալսում, գրավոր, մասնակցու-թյուն, դիտում	5-12 դաս 7-12 դաս 1-ին դաս.	8- 16. 02	Տնօրեն, փոխտնօրեն, մ/մ նախագահներ, դասվարներ, կազմակերպիչ, ծնողներ Դասընթացա-վարներ, վերապատ-րաստվածներ
24 - 25 շաբաթ	. Միջոցառումների կազմակերպում	Դիտում, այցելություն	5-12 դաս	20 -30 02	Տնօրեն, փոխտը-նօրեն,կազմա-կերպիչ, դասղեկներ
26 -27 -28 շաբաթ	Դասավանդման մեթոդներն ու ձ–երը մաթեմատիկա, հայոց լեզու – տարր.դասարան-ների առարկաների ուսուցիչների մոտ, դիդակտիկ պարագաների օգտագործումը	Դասալսում, մասնակցում հաշվառում	1-12 դաս	1- 25. 03	Տնօրեն, փոխտնօրեն, մ / մ նախագահներ

29- 30 շաբաթ	Առարկայական խմբակների աշ-խատանքը, միջո-ցառումների դաս-տիարակչական ազդեցությունը	Մասնակցություն ,ինֆորմացիա,	7-12 դաս	28 .03 - 10. 04	Տնօրեն, փոխտնօրեն, կազմակերպիչ
31 - 32 շաբաթ	Բանավոր խոսքի վիճակը, օտար լեզուների դասա-վանդումը 3-7 դա-սարաններում	Հարցում , դասալսում,	5-12 դաս 3-7 դաս	15 - 30 .04	Տնօրեն, փոխտնօրեն, մ / մ նա-խագահներ
33 - 34 շաբաթ	2 -րդ կիսամյակի ամփոփում կիսամյակային գրավոր աշխատ. կատարում. դասամատյաների վի-ճակը , ծրագրերի կատարողականի ստուգում	Գրավոր-տեստային ստուգող ա-կան /	8 - 12 դաս.	5 -20 . 05	Տնօրեն, փոխտնօրեն, մ / մ նա-խագահներ, ուսու-ցիչներ

Աշխատանքների կատարման հսկողությունը դրվում է տնօրենի, փոխտնօրենի, կազմակերպիչի, մ / մ նախագահների, դպրոցի խորհրդի անդամների, ծնողական ակտիվի վրա:

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

2022-2023 ուսումնական տարում նախատեսվում է դպրոց ընդգրկել 6 - 17 տարեկան դպրոցահասակ բոլոր երեխաներին, որոնք ի վիճակի են սովորելու հանրակրթական դպրոցում: Մեր կանխատեսումներով դպրոց կհաճախեն 36 աշակերտ, որով կկազմակերպվի 7.75 դասարան / 3.4 աշակերտ միջին խտությամբ / , որոնց հետ կպարապեն 13-16 ուսուցիչներ՝ 5-22 ժամ միջին ծանրաբեռնվածությամբ: Քանի որ վերջին շրջանում մեծ թիվ է կազմում արտագաղթը, կարծում ենք՝ կունենանք 1 -2 աշակերտի արտահոսք, որն իր հետ կբերի դասարանների միացում, ինչն էլ պատճառ կդառնա ուսուցիչների կրճատման, որին մենք հակված չենք:

2022-23ուս.տարում դասարանների ղեկավարներ են նշանակվում՝

1 . 1- ին դաս.- Վ.Պետրոսյան

2. 2-րդ դաս - Բարաթյան Ռիմա
3. 3-րդ դաս .- Ամարյան Վարդուհի
4-րդ - դաս Պետրոսյան Վալենտինա
5 -րդ դաս - Խաչյան Թեհմինե
6 - րդ դաս - Սամվելյան Սերյոժա

7-րդ - դաս Կարապետյան Մարգարիտ
8 -րդ դաս .- Առաքելյան Միեր
9-րդ դաս - Դանիելյան Արտակ
10-րդ դաս .- Մանգասարյան Սաթենիկ
11-րդ դաս Առուստամյան Զարա
12-րդ դաս. Թավադյան Սիրվարդ

Դպրոցում նախատեսել առարկայական 3 մասնախումբ, որոնց նախագահներ հաստատել / ընտրությունների արդյունքով / ներքոհիշյալ ուսուցիչներին՝

1. Ամարյան Վարդուհի - Դասվարների
2.Թավադյան Սիրվարդ -Լեզուների, պատմություն , - հասարակ.
3. Կարապետյան Մարգարիտ -բնագիտա-մաթեմատ.

Խմբակների ղեկավարներ / խմբավարներ / են նշանակվում՝

1. 11 ժամ բաց

Կաբինետների վարիչներ են նշանակվում՝

1. Լաբորանտ- Կարապետյան Մարգարիտ
2. Ծախմատ - Առաքելյան Միեր
3. Մաթեմատիկա - Օրդյան Անա
4. Արհեստանոց - Դանիելյան Արտակ
5. Կար ու ձևի - Վ. պետրոսյան
6. Գրականության - Ս.Թավադյան

Մանկավարժական կադրերի ճիշտ տեղաբաշխումը մեծապես նպաստում է աշխատանքների արդյունքներին, ուստի նպատակահարմար ենք համարում, որ

յուրաքանչյուրին տեղյակ կպահվի, թե՝ իր պարտականությունների մեջ թերացողները իսկույն կփոխարինվեն նորերով: Այս մեթոդը կարծում ենք կաշխատի և կհասնենք հաջողության, այլ դեպքում՝ կկիրառենք նոր ձև:

Օպտիմալացումը և կրթության մասին օրենքը ենթադրում են նոր մասնագիտության ձեռք բերում կամ վերաորակավորում, ինչին էլ ձգտելու ենք հասնել՝ օգտագործելով և ներքին հնարավորությունները, և մարզում կամ հանրապետությունում մեզ ընձեռված ամենափոքր իսկ առիթը: Այս ումնական տարում անցել ենք էլեկտրոնային դասամատյանների վարման կարգին: Ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ կատարվելիք աշխատանքներից արժե առանձնացնել ինքնակրթության, դպրոցական ատեստացիայի, նոր տեխնոլոգիաներին տիրապետելու, առանձին կուրսերի և սեմինարների կազմակերպման / թեկուզ ենթաշրջանի դպրոցներում / գործընթացի հետևողական և նպատակային անցկացումը, երտասարդ ուսուցիչների հետ
տարվող գիտամեթոդական աշխատանքների նպատակամղվածությունը, վերոնշված կատարվելիք աշխատանքների համար պայմանների ստեղծումը:Այս ամենը հետապնդում է միայն մեկ նպատակ՝ ունենալ մասնագիտական և մանկավարժամեթոդական բարձր որակավորում ունեցող մանկավարժ, որն ի վիճակի կլինի այսօրվա և վաղվա պահանջներին համապատասխան դասապրոցես կազմակերպել, ունենա ստեղծագործաբար մտածելու և այն հաղորդելու կարողություն և հմտություն: Դպրոցի տնօրինությունը պատրաստ է խթանելու և աջակցելու դպրոցանպաստ ցանկացած ձեռնարկի:

Այս բաժնի իրականացման համար կարևոր մաս է կազմում նաև տնօրենին կից խորհրդի և

մանկավարժական խորհրդի նիստերի նախանշումն ու իրականացումը:
Նախատեսվում է ստեղծել տնօրենին կից խորհուրդ, որտեղ կընդգրկվեն՝ փոխտնօրենները, մ/կ կազմակերպիչը, մ / միավորումները կոորդինացնողը, արհկոմի նախագահը, զինղեկը:
Որպես գործողությունների պլան ընդունել դպրոցի ամսական պլանը և ընթացիկ հարցեր, որոնք կառաջանան և լուծման կարիք կունենան: Յուրաքանչյուր ամսվա վերջին օրը ժամը 15- 30 - ին հրավիրվում է խորհրդի նիստ, որտեղ հանձնարարվում է հաջորդ ամսվա անելիքները և տրվում նախորդ ամսվա կատարածի հաշվետվություն;
Իսկ մանկավարժական խորհրդի նիստերի գումարումը կազմակերպվում է ըստ ընդունված կանոնակարգի՝ տարեկան 4 - 6 նիստ:

2022 - 2023 ուս տարում նախատեսում ենք գումարել մանկավարժական խորհրդի նիստեր՝ ներքոհիշյալ օրակարգով և կատարման ժամկետով .

1 - ԻՆ ՆԻՍՏ

30.08.2022 թ.

1.Մանկ. խորհրդի քարտուղարի ընտրություն

2. 2021-2022 ուստարվա արդյունքները և 2022 - 2023 ուստարվա անելիքները, դպրոցի նախապատրաստվածությունը ուսումնական տարուն.
/ զեկ. տնօրեն /

3 .2022 - 2023 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում
/ զեկ. տնօրեն /

4.Դասաբաշխման վերջնական ճշտում և ուս. պլանի հաստատում

5. Մ/մ նախագահների , արտադասարանական խմբակավարների, կաբինետի վարիչների նշանակում և աշխատանքային ռեժիմի հաստատում:

6. Ընթացիկ հարցեր:

2- ՐԴ ՆԻՍՏ 27.12.2022թ.

1. 1 - ին կիսամյակի արդյունքները և 2 - րդ կիսամյակի խնդիրները
/ զեկ. տնօրեն, փոխտնօրեն /

2. Մաթեմատիկայի , ռուսաց լեզվի և տարրական դասարանների դասավանդման դրվածքը դպրոցում
/ զեկ. փոխտնօրեն, մ / մ նախագահներ /

3. Քննադատական մտածողության ձևավորման հնարներն ու մեթոդները գրականության դասերին
/ զեկ. Ս. Թավադյան /

4. Ընթացիկ հարցեր:

3 - ՐԴ ՆԻՍ 20.03.2023 թ.

1. Լեզուների և մաթեմատիկայի դասավանդման դրվածքը տարրական դասարաններում
/ զեկ. փոխտնօրեն, մ / մ նախագահ /

2. Ավագ դպրոցի դասղեկների հաշվետվությունները
/ ինֆ. 10 - 12 դասղեկներ /

3. Զինղեկի և ֆիզղեկի հաշվետվությունները երեխաների հայրենասիրական և ֆիզիկական դաստիարակության ամրապնդման ուղղությամբ կատարած աշխատանքների մասին
/ ինֆ. զինղեկ, ֆիզղեկ /

4. Երեխային հոգեբանական ընկճվածությունից հանելու իմ փորձից
/ զեկ. / Վ. Խաչատրյան/

5. Ընթացիկ հարցեր:

4 - ՐԴ ՆԻՍ 04.05.2023 թ.

1. Հայոց լեզվի և բնագիտական առարկաների դրվածքը դպրոցում

/ զեկ. փոխտնօրեն, մ / մ նախագահներ /

2. 5 - 9 - րդ դասարանների դասղեկների, կազմակերպիչների և գրադարանավարի հաշվետվությունները

/ ինֆ. դասղեկներ, կազմակերպիչներ, գրադարանավար /

3. Հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի միջառարկայական կապե-րի շուրջ մի քանի դիտարկում
/ զեկ. Մ. Առաքելյան /
4. Ընթացիկ հարցեր

5 - ՐԴ ՆԻՍ 20.06.2023 թ.

1. 2022 - 2023 ուստարվա 1-12 -րդ դասարանների աշակերտների 2 - րդ կիսամյակի և տարեկան արդյունքները, աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու և քննություններին թույլատրելու, գովասանագրերով պարգևատրելու հարցը
/ զեկ. փոխտնօրեն, տնօրեն /

2. Ավարտական քննությունների հրահանգի մասսայականացում և կարգացուցակի հաստատում
/ ինֆ. տնօրեն /
3. Ընթացիկ հարցեր:

6 - ՐԴ ՆԻՍ 21- 29.06.2023թ.

1. Տարեկան միայն դրական գնահատականներ ունեցող 4 - րդ ու 9 - րդ և 12 - րդ դասարանի քննությունները դրական գնահատականներով հանձնած աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու, ավարտական վկայականներ և ատեստատներ տալու մասին

/ ինֆ. տնօրեն /

2. Ընթացիկ հարցեր:

Ծանոթություն ----
1. Մանկավարժական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում ամիսը մեկ անգամ անց կացնել խորհրդակցություններ՝ առաջացած թեմաներով:

Այս բաժնի աշխատանքների իրականացման համար պատասխանատու են՝ տնօրենը, փոխտնօրենը, կազմակերպիչը, մասնախմբերի նախագահները, դպրոցի խորհրդի անդամները :

ԲԱԺԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Այս բաժնի աշխատանքների կազմակերպման համար կարևորում ենք ուսուցիչների վերապատրաստման և վերամասնագիտացման հարցերը, մեթոդ-միավորումների նպատակային գործունեությունը, դասալսումները, մանկխորհրդի պլանների իրագործումը, ուսուցիչների մասնակցությունը կրթական ծրագրերի մշակմանը, մանկավարժական ընթերցումներին, կոնֆերանսներին - այլն:
Դրանց իրագործման համար նախատեսում ենք կատարել հետևյալ աշխատանքները.

1.Ուսուցիչների վերապատրաստման և վերամասնագիտացման գործընթացը կազմակերպելու

համար հնարավոր բոլոր միջոցներն օգտագործել՝ կապ ստեղծելու համար ԿԶՆԱԿ-ի, ԿԳՆ- ի և այլ կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են նման գործունեությամբ:
2. Օգտագործել ներքին հնարավորությունները՝ մեր դպրոցի լավագույն և վերապատրաստված ուսուցիչների միջոցով մեթոդական և մանկավարժական օգնություն ցույց տալու հատկապես երիտասարդ և սկսնակ մանկավարժներին:
3. Մասնախմբերի կատարելիք աշխատանքները համարել դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության հիմնաքար / ըստ այդմ էլ կազմված է ընդհանուր աշխատանքային պլանը / :
4. Մասնախմբերի նիստերը գումարել ըստ չափորոշիչների՝ ամիսը մեկ անգամ, արձանագրել:
5. Մասնախմբերի նիստերում քննարկման առարկա են դառնում տվյալ առարկայի դասավանդման հետ կապված ամեն ինչ՝ օրվա պլանից մինչև մեթոդական զեկուցում / մանրամասն՝ տես կից ներկայացվող մեթոդմիավորումների աշխատանքային պլանները /:
6.Դասալսումների թեմա են դառնում դպրոցի ուսումնադաստիարակչական ողջ գործընթացը՝ առաջին դասարանի տառի ուսուցումից մինչ- առարկայի դրվածքի խորացված ուսումնասիրում ու ուսուցիչների մեթոդամանկավարժա-կան պատրաստվածություն, աշակերտների գիտելիքների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում, ինքնագնահատում:
7. Կարևորվում է մանկխորհրդի նիստերի օրակարգում ընդգրկված հարցերի առօրեականությունը, որի կատարումը կլինի բոլորի սուրբ պարտականությունը այդ էլ հաշվի առնելով՝ կազմվել է մանկխորհրդի նիստերի գումարման ժամանակացույցը:
Որոշվել է՝ գրենք այն, ինչը այսօրվա դրությամբ կարող ենք անել:

8. Ուսուցիչներին ստեղծագործական գործունեության մղելու կարևոր միջոց է մանկավարժական ընթերցումներին մասնակցելը, որի համար տնօրինությունը պատրաստ է ստեղծել ամենաարդիական պայմաններ / դա կլինի խրախուսում, հրապարակում մամուլում, ելույթ մարզային կամ հանրապետական մանկավարժական կոնֆերանսներում, առանձին գրքույկով հրատարակում և այլն /:
9.Շատ ենք կարևորում ուսուցիչների և աշակերտների թղթապանակների կազմումն ու այն հարստացնելը:

Այսօր առաջնահերթ խնդիր է համարվում նաև ուսուցիչների ինքնքկրթությամբ զբաղվելու պրոբլեմը, որին հասնելը շատ բարդ և նրբանկատ աշխատանք է պահանջում:
Որպեսզի ամեն ինչ սահուն և նպատակային լինի, նախատեսում ենք որոշակի թեմաներ և գրականության ցանկ, որը թույլ կտա ուսուցչին ինքնքակրթությամբ զբաղվելով՝ միաժամանակ օգուտ բերել մասնախմբերի աշխատանքը ճիշտ և նպատակային կազմակերպելուն: Այդ աշխատանքների թեմատիկան և ժամանակացույցը մանրամասն ներկայացված է մասնախմբերի և մանկխորհրդի նիստերի անցկացման ժամանակացույցում, ինչպես նաև դասղեկի աաշխատանքային պլաններում
/ տես՝ վերոնշված օղակների աշխատանքային պլանները /, իսկ տնօրինության գլխավոր խնդիրներից է՝ դրանց կյանքի կոչելը:

Այս ենթաբաժնի նախատեսվածի իրականացման համար պատասխանատու են համարվում տնօրենը, փոխտնօրենները, մեթոդմիավորումների նախագահները, դպրոցի խորհրդի անդամներ

ԲԱԺԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Դպրոցի և ընտանիքի կապի ամրապնդումը հնարավոր է միայն սերտ համագործակցության շնորհիվ, որին հասնելու համար անհրաժեշտ է ամենօրյա հետևողական աշխատանք տանել:
Ծնողների՝ դպրոցի հետ համագործակցությունը նպատակահարմար է կազմակերպել՝ օգտագործելով այսօր հրապարակի վրա գտնվող ձևերն ու մեթոդները, ինչպես նաև տեղային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կիրառել անհատական մոտեցումներ, որպեսզի սպասվելիք արդյունքները լինեն շոշափելի:
Այս գործում կարևորում ենք ծնողներին դպրոցի գործունեության ծանոթացմանը, իսկ դրան կարելի է հասնել՝ ստեղծելով ծնողական համալսարան, որի նպատակը լինելու է ծնողներին տարրական գիտելիքներ հաղորդել դպրոցի գործունեության , դաստիարակության և ուսուցման գործում ծնողների դերի և այլ աշխատանքների մասին, որոնք կնպաստեն վերջնական արդյունքների էլ ավելի բարձրացմանը:
Անհրաժեշտ ենք համարում նաև համայնքի անդամների ներգրավումը դպրոցի կառավարման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ այն միջոցառումների մասնակցությանը, որը կնպաստի դասապրոցեսի ճիշտ և նպատակային իրականացմանը:
Դրա համար նախատեսում ենք ստեղծել ծնողական

ակումբներ, որտեղ բազմապիսի թեմատիկայով զեկուցումներ, ցերեկույթներ, միջոցառումներ կկազմակերպվեն, որի ակտիվ մասնակիցները պետք է լինեն ոչ թե ուսուցիչները, այլ համայնքի անդամները: Թեմատիկան նախատեսում ենք ընտրել ծնողների առաջարկով, որպեսզի իրենց ավելի սրտամոտ լինի: Այդ պլանները առանձին տողով նախանշված է կազմակերպչի աշխատանքային պլանում:

Կարևորում ենք նաև դպրոցի կապը մշակութային հաստատությունների հետ, որովհետև երեխաների գեղագիտական դաստիարակությունը ուսումնադաստիարակչական գործընթացի կարևորագույն բաղկացուցիչն է, իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ ենք համարում ավելի սերտացնել եղած կապը Գորիսի և Կապանի պետական թատրոնների , մարզպետարանի մշակույթի բաժնի հետ, որպեսզի համատեղ ջանքերով կարողանանք կատարել ուսումնադաստիարակչական աշխատանքների այս կարևոր ենթաբաժինը: Բացի այդ նախատեսվում է կազմակերպել բազմաթիվ էքսկուրսիաներ մարզի և հանրապետության պատմամշակութային տեսարժան վայրեր / այդ մասին մանրամասն ներկայացված է դասղեկների աշխատանքային պլաններում /, իսկ բյուջեի կազմման ժամանակ որոշակի գումար նախատեսել՝ դպրոցի առավել աչքի ընկած աշակերտներին, որպես խրախուսման միջոց, մասնակից դարձնել Երևանում անցկացվելիք որևէ մասսայական միջոցառման:

Դպրոցի և ընտանիքի սերտ կապը ապահովում է նա՝ ծնողական, դասարանական և համադպրոցական ժողովների հրավիրումը: Նախատեսվում է ամիսը մեկ անգամ հրավիրել ծնողական դասարանական ժողով, որտեղ քննարկման առարկա դարձնել օրվա առաջացած խնդրից մինչև աշխատանքային պլանով նախանշվածը: Այս գործում մեծ դեր է հատկացվում

ծնողական կոմիտեներին, որոնց հետ դասղեկի համագործակցված աշխա-տանքը շատ շուտով կտա իր արդյունքը: Ծնողական ժողովները պետք է ծառայեն իրենց նպատակին, ունենան կողմնորոշվածություն, մաս կազմեն ծնողական ակումբների և համալսարանների, այսինքն միայն գնահատական-ների և երեխայի լավ կամ վատ պահվածքով չպետք է սահմանափակվի , այլ ամեն ժողով ունենա կոնկրետ թեմատիկա / հիգիենա, դասագրքեր ունենալու անհրաժեշտություն, հոգեբանություն, ծեծի ու վախի հետագա վնասները , ուսուցիչներին գնահատելու հարցաշարերի ներդրում և այլն / :

Համադպրոցական ընդհանուր ծնողական ժողովները ենթադրում են իրենց մեջ ներառել այնպիսի գլոբալ հարցեր ու խնդիրներ, որոնց լուծումից էլ կախված կլինի ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման հաջողությունը: Դրա համար նախատեսվում է ստեղծել դպրոցական ծնողա-կան այնպիսի կոմիտե, որի և մեր նպատակը կլինի առողջ, կրթված և դաստիարակված սերունդ ունենալը: Անհրաժեշտ ենք համարում ծնողական լիազորների ինստիտուտի գործունեության շրջանակների ընդլայնումը, դպրոցի կառավարման իրական մասնակցությունը, ուսուցման համար անհրաժեշտ ներդրում կատարել ցանկացողներին դպրոցի հետ կապելու անաչառ մոտեց-
ման ձևավորում, որպեսզի ներդրողը չզղջա իր արածի համար:

Նախատեսում ենք համընդհանուր ծնողական ժողովներ հրավիրել կիսամյակը մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հարկ եղած պահին: Ծնողական ընդհանուր ժողովներին պարտադիր ունենալ մեթոդական զեկու-ցումներ թե տնօրինության, թե ծնողների կողմից: Ցանկալի կլինի այնպես անել, որ

ծնողները անհամբերությամբ սպասեն հաջորդ ժողովին...

Քանի որ մենք սերունդ ենք դաստիարակում քաղաքացիական ապագա հասարակության համար, ուստի նպատակահարմար ենք գտնում երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցի գործունեության կարևորագույն բաղկացուցիչ համարելը, աշակերտակենտրոն դպրոցի սկզբնավորումը և խորացումը :

Այս բաժնի իրագործման համար պատասխանատու են դառնում տնօրենը, փոխտնօրենները, հատկապես կազմակերպիչը, ծնողական կոմիտեները, դասղեկական մեթոդմիավորումները:

ԲԱԺԻՆ ՅՈԹԵՐՈՐԴ

ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Քանի որ դպրոցը գործում է ըստ աշակերտի ֆինանսավորմամբ, ուստի նախորդ տարիների փորձը հաշվի է առնվում նոր ֆինանսական տարվա բյուջեն կազմելիս: Այնտեղ հիմնականում տեղ են գտնում ամենաառաջնահերթ հոդվածների ֆինանսավորումը, դրանք են՝ աշխատավարձ և դրան հավասերացված վճարումներ, պարտադիր սոցվճարներ,ջեռուցում, էլ.էներգիա, կապի ծառայություն,ջրմուղ- կոյուղի,

գրասենյակային ապրանքներ, կապիտալ ծախսեր,սակայն սակավ աշակերտներ ունենալու պատճառով ֆինանսը չի բավականացնում ,ստիպված տրվում է լրացուցիչ ֆինանս : Այսօրվա ֆինանսավորումը այնքան է, որքան անհրաժեշտ է դպրոցի գոյատևմանը: Ամբողջ ծախսերը կատարվում է ըստ նախահաշվի և թույլ չի տրվում ոչ մի լումայի գերածախս, ընդհակառակն՝ ամեն ինչ արվում է՝ այդ սուղ միջոցներից որևէ բան խնայել, որպեսզի օգտագործենք այլ հոդվածներով.,
Ժամանակին կատարվում և վերադաս մարմիններին է ուղարկվում անհրաժեշտ ֆինանսական և հաշվապահական հաշվետվություններ, ոչ մի անգամ ուշացման կամ սխալ ինֆորմացիայի համար չենք զգուշացվել:

Նախապատրաստական աշխատանքներ են տարվում շենքի ջեռուցման համար, չնայած դպրոցը վերանորոգվել է ,սակայն դեռ չի լուծվել ջեռուցման խնդիրը որպեսզի ձմռան գալով անակնկալի չգանք:

Համապատասխան աշխատանքներ է տարվում գրադարանային ֆոնդի պահպանման ու հարստացման ուղղությամբ. մասնավորապես՝ մեր հաշվեհամարից անհրաժեշտ գումար ենք փոխանցում նոր հրատարակված կամ պակաս դասագրքերի ձեռքբերման համար, որպեսզի բոլոր աշակերտներն ունենան իրենց գրքերը: Սակայն պետք է նշել, որ դասագրքապահ-պանությունը լավ վիճակում չէ, որովհետև վատ է համագործակցությունը գրադարանի և ուսուցիչների ու ծնողների միջև,ուստի այս ուղղությամբ նպատակամղված և հետևողական աշխատանք պետք է տարվի / գրադարանավարի աշխատանքային պլան /: Թեև դասագրքերը տվում է երեխաներին անվճար սակայն պետք է այն խնամքով պահպանվի.;

Մեծ աշխատանքներ է պահանջվում երեխաների ֆիզիկական և ռազմական դաստիարակության գործը բարձր մակարդակի հասցնելու համար, ուստի անհրաժեշտություն կա ֆիզկուլտուրայի և ՆԶՊ-ի դասերի համար գույքի ձեռքբերման կամ նորացման, ծրագրային նյութերի խորությամբ ուսուցանման և այլ օժանդակ , գործին խանգարող երևույթների վերացման համար, որովհետև չպետք է մոռանալ, որ մեր նպատակներից մեկն էլ ֆիզիկապես առողջ և հայրենասեր սերունդ դաստիարակելն է:Արդեն նախարարուփյուն է ուղարկվել դպրոցին ահրաժեշտ նոր գույքի ցանկը ,շուտով դպրոցը կստանա նոր գույք:

Կարևորվում է նաև դպրոցական շենքի և շրջապատի սանիտարահիգիենիկ վիճակի համապատասխանությունը նորմատիվներին: Այդ ուղղությամբ կատարվելիք աշխատանքները գտնվում են բոլորիս, հատկապես տնօրինության ամենօրյա ուշադրության կենտրոնում: Ժամանակին ձեռք են բերվում
անհրաժեշտ նյութեր և պարագաներ, կատարվում համապատասխան վերահսկողություն: Այստեղ ավելորդ չենք համարում նշել, որ կարևոր է նաև մաքրասիրության դաստիարակությունը, որին հաճախ ուշադրություն չենք դարձնում:

Դպրոցին անհրաժեշտ փաստաթղթեր, ուսումնաօժանդակ նյութեր ձեռք են բերվում առաջին իսկ հնարավորության դեպքում:

Վիճակագրական հաշվետվությունները ստույգ և հավաստի տվյալներով լրացնելն ու ժամանակին տրամադրելը վերադաս կառույցներին մեզ համար սովորույթի ուժ է ստացել:

Ժամանակին կազմել և վերադաս մարմնի հաստատմանը ներկայացնել տարիֆիկացիոն ձևաթուղթը, որում տրված կլինեն միայն ճիշտ, հավաստի տվյալներ, բացառված լինեն ֆինանսական խախտման նշույլն անգամ:

Այս բաժնի համար պատասխանատուներ են դառնում տնօրենը, տնտեսական գծով փոխտնօրենը, հաշվապահը,:

Յուրաքանչյուր աշխատանքային պլան ունենում է լրացման, ավելացման, պակասեցման տեղ, այնպես որ այս աշխատանքային պլանը բաց է բոլորի համար, և շնորհակալ կլինենք ստեղծագործական առաջարկությունների համար: Ամեն քննարկումից մի լավ միտք կծնվի, ուրեմն՝ մենք կողջունենք նրանց, ովքեր լավի և առաջադիմականի կողմնակիցն են...